«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Բերբերյան

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործընթացում, ընտանիք-դպրոց համագործակցության ձևերը 4

1.2 Ծնողական կրթության կարևորությունը երեխաների դաստիարակության գործընթացում 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխայի անձի կայացումը սկսվում է ընտանիքում, որտեղ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որը կնպաստի երեխաների զարգացմանը: Երեխայի անձի համարժեք զարգացման համար էական նշանակություն ունեն ընտանեկան հարաբերությունների հուզական տոնը և վերահսկման, կարգ ու կանոնի գերակշռող տիպը, քանզի դրանց բացակայության դեպքում երեխաները կարող են ունենալ ֆիզիկական, ճանաչողական, մտավոր, հուզական և վարքային զարգացման հապաղումներ:

Ծնողների մանկավարժական կրթության հիմնախնդիրը մանկավարժության ամենադժվար և ամենաքիչ մշակված հարցերից է, որով էլ հենց պայմանավորված է մեր աշխատանքի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ընտանիք-դպրոց համագործակցության ձևերը և ներկայացնել ծնողական կրթությանը նպաստող մանկավարժական այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն ծնողների մանկավարժական իրազեկությանը և երեխաների հետ տարվող աշխատանքների բարելավմանը:

Հետազոտության խնդիրները.

- Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականություն,
- Ներկայացնել ընտանիք-դպրոց համագործակցության եղանակները,
- Մշակել մանկավարժական աշխատանքների այնպիսի համալիր ծրագիր, որը կնպաստի ծնողների մանկավարժական իրազեկության բարձրացմանը:

Ավարտական աշխատանքի կառուցվածքը–Ավարտական աշխատանքը կառուցված է ներածությունից տեսական մասից, գործնական առաջադրանքներից, եզրակացություններից, գրականության ցանկից: Աշխատանքը համակարգչային շարվածքով կազմում է 18 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործընթացում, ընտանիք-դպրոց համագործակցության ձևերը

«Ընտանիքը բնության գլուխգործոցներից մեկն է»:

Ի. Սանտայանա

Դարերի ընթացքում երեխաների դաստիարակությունն իրականացվել է ինչպես ընտանիքում, այնպես էլ տարբեր հասարակական հաստատություններում: Երեխաների դաստիարակության գործում ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային օղակի ունեցած կարևոր դերն անժխտելի է: Հասարակական դաստիարակության զարգացման հետ միասին իր նշանակությունը միշտ պահպանել է նաև ընտանեկան դաստիարակությունը:

Ուսուցման, դաստիարակության և զարգացվածության անհրաժեշտ մակարդակ ապահովելու նպատակով ծնողների ներգործությունը երեխաների վրա ընդունված է անվանել ընտանեկան դաստիարակություն: Ընտանիքը իրականացնում է մի շարք կարևոր գործառույթներ՝ վերարտադրողական, տնտեսական, դաստիարակչական, սոցիալականացման, հաղորդակցական, ինչպես նաև ժամանցի կազմակերպման և այլն:

Յուրաքանչյուր ընտանիք տարբերվում է մյուսներից իր կառուցվածքով, խնդիրներով, ավանդույթներով, սովորություններով, հետաքրքրություններով, արժեքներով, բարքերով, կրթության տարբեր հնարավորություններով: Յուրաքանչյուր մանկապարտեզ նման է մյուսներին ընդհանուր ռազմավարությամբ, կրթական ծրագրերով, արժեքային համակարգով:

Ուստի անհրաժեշտ է ծնող-մանկավարժ փոխհարաբերությունները կառուցել այնպես, որ կարևորված լինի ծնողի պատվերը և երեխայի կարողությունները՝ հաշվի առնելով նրա հնարավորությունները: Անհրաժեշտ է նաև կրթել և զարգացնել ծնողներին, քանզի նաև նրանց իրազեկվածության և կրթության մակարդակով է պայմանավորված նաև երեխայի կրթության որակը:

Հայ մանկավարժական մտքի ամենապայծառ դեմքերից մեկը՝ Հ.Հինդլյանը երեխայի դաստիարակության գործում բացառիկ նշանակություն էր տալիս ընտանիքին, մասնավորապես՝ մոր դերին։ Այստեղից էլ բխում է նրա այն համոզմունքը, որ ծնող լինելն առաջին հերթին մեծ պատասխանատվություն է՝ Նշելով «Ծնողի կոչումը հատկանշ է անզուգական գեղեցկության և մեծ վայելչության։ Նա գտնում էր, որ անհրաժեշտ է անդրադառնալ այդ կարևոր հարցին։ Նա միաժամանակ նշում էր, որ հարկավոր է ուշադրություն դարձնել այն հարցին, թե ինչպես են կրթվում և դաստիարակվում հայ աղջիկները ու պատանիները, որոնք դառնալու են վաղվա ծնողները։

Հ.Հինդլյանի կարծիքով՝ դպրոցներում պետք է մեծ նշանակություն տրվի ծնողների կրթությանը, դասավանդվի «Ծնողական գիտություն» առարկան։ Նա, լինելով առաջին տեսաբանը այդ հարցում, կարողացել է այդ տեսությունը կիրառել գործնականորեն, այսինքն՝ երիտասարդությանը սովորեցնում էր ապրելու արվեստը՝ նշելով, որ ընտանեկան կյանքը ինքնին մի դպրոց է, որ տղամարդն ու կինը փոխադարձաբար իրար պետք է լրացնեն, և թեև տղամարդը և կինը նման չեն իրար, բայց իրենց իրավունքների մեջ հավասար են։

Համոզված լինելով, որ ընտանիքը, մանկապարտեզը և դպրոցը համարվում են երեխայի դաստիարակության գործին նպաստող գլխավոր ազդակներ՝ Հ.Հինդլյանը վարպետորեն փորձել է կամրջել այդ ազդակները, օգնել ծնողներին, ուսուցանել նրանց և նրանցից պատրաստել ընտիր հայրեր և մայրեր, որպեսզի նրանք էլ իրենց հերթին օժանդակեն մանկապարտեզի ստանձնած պատասխանատու և դժվարին գործին։ Եվ որպեսզի համագործակցային կապն ապահովվի, յուրաքանչյուրը պիտի իմանա և կատարի իր պարտականությունները։

Ընտանեկան դաստիարակության ուժը, որը պիտի գոյություն ունենա ամբողջ կյանքում, ծնողների և երեխաների մտերմական հարաբերություններն են, գործերը և արարքները։ Առավելապես ընտանիքում է դաստիարակվում երեխան, ձևավորվում են նրա բնավորությունն ու համոզմունքները։ Ընդ որում, այն համոզմունքները, որոնք ձևավորվել են մանկության տարիներին, ամենից ավելի հաստատուն ու գործուն են։

Ընտանեկան դաստիարակության առաջին կարևոր պայմանը չափավորությունն է ամեն ինչում։ Չի՛ կարելի անընդհատ սիրել երեխային, անընդհատ գովեստների

արժանացնել կամ անընդհատ պարսավանքի ենթարկել, միշտ խրախուսել կամ միշտ պատժել, նրա բոլոր պահանջները կատարել կամ չկատարել: Դրանք բոլորը պետք է լինեն չափավորված ու դուրս չգան անհրաժեշտության սահմաններից:

Երեխաների դաստիարակության երկրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքայնությունն է: Ծնողների ընդունած որոշումները, վճիռները պետք է հիմնավոր անսակարկ լինեն: Ուրեմն ծնողների սկզբունքայնությունը, վճռականությունը, օբյեկտիվությունը երեխաներին ճիշտ դաստիարակելու երաշխիքներից են: Մանկապարտեզում այնուհետև նաև տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ դրվածքի համար անպայման պետք է իմանալ, թե ինչպես է դաստիարակվում երեխան ընտանիքում, ինչպիսի գործնական հմտություններով է առաջին անգամ մտել կոլեկտիվ, որոնք են երեխային շրջապատող մարդկանց դաստիարակչական ներգործությունների թույլ և ուժեղ կողմերը, համաձայնեցվում է արդյոք ընտանեկան դաստիարակությունը մանկապարտեզում իրականացվող դաստիարակության սկզբունքների ու մեթոդների հետ, ինչպես է ծնողների միջոցով իրականացվում մանկապարտեզի ազդեցությունը երեխաների վրա և այլն: «Ընտանիք». ինստիտուտի ուղղությամբ հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակների տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային զարգացումները դեռևս շարունակվում են էապես ազդել ընտանիքի մոդելի վրա: Այդ իսկ պատճառով մեծանում է ընտանիքի «ռիսկայնության», հավանականությունը, և ապագա սերնդի դաստիարակության պատասխանատվությունն ընկնում է մանկապարտեզի, իսկ հետո, արդեն դպրոցի վրա:

Մանկավարժները սովորաբար մշտական կապ են պահպանում ընտանիքների հետ: Նրանք երեխաների դաստիարակության մեջ հենվում են ընտանիքի վրա, համագործակցում ծնողների հետ, մշակում համատեղ ծրագրեր և գտնում դրանց իրականացման արդյունավետ եղանակներ: Բայց այդ՝ դպրոցի և ընտանիքի ընդհանուր ջանքերն այն դեպքում ցանկալի արդյունքների կհասնեն, երբ ընտանիքն իմանա, ինչ է անում դպրոցը, իսկ մանկավարժներն էլ իմանան, թե ինչ պայմաններում և ինչպես են դաստիարակվում երեխաներն ընտանիքում: Ծնողների հետ այդպիսի շփումների բացակայության դեպքում մանկավարժները հաճախ

դժվարանում են երեխաների հետ իրենց աշխատանքում, չեն կարողանում նրանց նկատմամբ գտնել ճիշտ մոտեցում, թույլ են տալիս սխալներ և այլն:

Ծնողների հետ աշխատելու առավել տարածված ձևերն են՝

- ծնողական ժողովները.
- սովորողների տուն կատարվող այցերը,
- ծնողներին դպրոց հրավիրելը,
- անհատական զրույցները և խորհրդատվությունները ծնողների համար,
- ծնողական համալսարանները, կոնֆերանսները և երեխաների դաստիարակության լավագույն փորձի փոխանակումը,
- ծնողների մանկավարժական լուսավորությունը,
- դպրոցի կապը այն հիմնարկների հետ, որտեղ աշխատում են ծնողները,
- սովորողների կատարած աշխատանքերի, հատկապես ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպումը /որը հաճախակի կազմակերպում ենք նաև հատուկ դպրոցում/:

Ծնողական ժողովները: Ծնողական ժողովների կազմակերպումը ընտանիք-դպրոց համագործակցության ավանդական, ամենատարածված և արդարացված ձևն է: Ծնողական ժողովների նպատակները, բովանդակությունն ու ձևերը պետք է որոշվեն՝ հիմք ընդունելով դպրոցականների, ծնողների և ծնող-դպրոց-երեխա համագործակցության ձևերն ու կարիքները:

Այս խնդիրները մանկավարժորեն ճիշտ և բարձր մակարդակով կազմակերպելու, ծնողական ժողովը ծագած խնդիրներին, ծնողների մանկավարժական լուսավորությանը ծառայեցնելու համար յուրաքանչյուր մանկավարժ պետք է մշակի ծնողական ժողովների թեմատիկա:

Ծնողական ժողովները չպետք է կազմակերպել միայն ուսումնական տարվա սկզբում և ուսումնական կիսամյակի վերջում: Նրանք պետք է նվիրվեն ոչ միայն դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական խնդիրներին, այլև ուղղված լինեն դպրոց-ընտանիք համագործակցության խնդիրներին, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, ծնողների հոգեբանամանկավարժական, գեղագիտական գիտելիքների հարստացմանը:

Այցելություններ դպրոցականների ընտանիք: Այս ձևը ծնողների հետ անհատապես աշխատելու ամենատարածված և արդյունավետ ձևն է: Դպրոցականների ընտանիք այցելելիս մանկավարժը ծանոթանում է իր սանի ընտանեկան պայմաններին, պատկերացում է կազմում երեխայի բնավորության, նրա հետաքրքրությունների ու հակումների, մեծերի և փոքրերի հետ նրա փոխհարաբերությունների մասին:

Ծնողներին դպրոց հրավիրելը: Մանկավարժը հաճախ զգում է ծնողներին հանդիպելու, նրանց հետ խորհրդակցելու կարիք՝ առանց ընտանիք այցելելու: Այդ դեպքում ծնողները հրավիրվում են դպրոց: Այսպիսի հանդիպումները տալիս են դաստիարակության և ուսուցման շատ հարցեր համատեղ վճռելու հնարավորություն: Ծնողներին չպետք է հրավիրել դպրոց միայն այն դեպքում, երբ երեխան թույլ է տվել կարգապահական որևէ խախտում կամ սկսել է վատ հաճախել: Երբեմն նա իրեն վատ չի պահում, բայց մանկավարժն ուզում է ծնողների հետ պայմանավորվել այդ երեխային հանրօգուտ որևէ աշխատանքում ընդգրկելու, երեխայի ընդունակությունները որևէ բնագավառում զարգացնելու, ընկերների հետ փոխհարաբերությունների և այլ խնդիրների մասին զրուցելու նպատակով:

Աշխատանք ծնողական ակտիվի հետ: Ծանոթանալով դպրոցականների ծնողների հետ՝ ուսուցիչը ստեղծում է ծնողական ակտիվ, որն իրեն հաճախակի օգնություն է ցուցաբերում և աջակցում սովորողների դաստիարակության և զարգացման գործում:

Շատ ծնողներ հաճախակի այցելում են դպրոց, հետևում են մանկավարժական նորություններին, այդ մասին իրազեկում են ծնողական կոլեկտիվին, ակտիվ կերպով մասնակցում են ծնողական ժողովների կազմակերպմանը, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակմանը նվիրված միջոցառումներին, էքսկուրսիաների կազմակերպմանը և այլն:

Ծնողների մանկավարժական լուսավորությունը: Ծնողները մանկավարժական գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ժողովների և կոնֆերանսների, զեկուցումների և դասախոսությունների ժամանակ այլև օգտվելով երեխաների զարգացմանը, կրթությանը, դաստիարակությանը նվիրված գրականությունից:

Այսպիսով, դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետությունը

մեծապես պայմանավորված է տվյալ դպրոցում դաստիարակության գործընթացը կառավարողի՝ դաստիարակի անհատական առանձնահատկություններով, մանկավարժական վարպետությամբ, ծնողների մանկավարժական իրազեկվածությամբ և դպրոց-ընտանիք համագործակցությամբ։

Դպրոցականի համար գլխավորն այն է, որ նա զգա մեծերի ուշադրությունն ու աջակցությունը, նրանց հետաքրքրություններն իր ձեռքբերումների և հաջողությունների նկատմամբ։ Եվ եթե դպրոցում երեխայի մեջ պահպանվի հետաքրքրությունն ու հայտնագործելու ընդունակությունը, սերը նոր բան սովորելու նկատմամբ, կարելի է ասել, որ հետագա ուսումնառությունը կլինի արդյունավետ, և նա ուսումնական հաջողություններ կունենա նաև կրտսեր, միջին և ավագ դպրոցում։

Այս համատեքստում տեղին է հիշել ականավոր մանկավարժ Վ.Ա.Սուխումլինսկու այն խոսքերը, որ մանկավարժությունը պետք է դառնա գիտություն բոլորի համար, թե՛ ուսուցիչների՛, թե՛ ծնողների։

1.2 Ծնողական կրթության կարևորությունը երեխաների դաստիարարակության գործընթացում

Ժամանակակից ծնողական կրթությունը լուրջ փոփոխությունների է ենթարկվում ինչպես բովանդակության, այնպես էլ ընտանիքում երեխաների դաստիարակության գործունեության կազմակերպման ձևերի և փոխհարաբերությունների տեսանկյունից: Ծնողական կրթության, ծնող-երեխա փոխհարաբերությունների զարգացումն ընթանում է այնպիսի մոդելների որոնման ուղղությամբ, որոնք թույլ կտան բացահայտելու երեխաների ճանաչողական, հուզական, սոցիալ-հոգեբանական կողմերը:

Երեխայի ապագա կայացումը սկսվում է ընտանիքի պատերի ներսում, որտեղ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի բարոյահոգեբանական միջավայր, որը կնպաստի առողջ երեխաների զարգացմանը:

Երեխայի անձի ձևավորման վրա էական ազդեցություն ունեն հարազատ ընտանիքի միջավայրն ու առողջ մթնոլորտը: Յուրաքանչյուր երեխայի համար դրանք տարբեր են՝ ուրախ կամ տխուր, չափազանց զգացմունքային կամ սառը, անտարբեր կամ ջերմ, լի վախերով կամ անվտանգ և աջակցող: Այն երեխաները, ովքեր զրկված են ծնողների կողմից անհրաժեշտ ուշադրությունից, հոգատարությունից, սիրուց, մեծանում են անվստահ, պասիվ կամ, ընդհակառակը, ագրեսիվ, դաժան և սառը: Ընտանեկան փոխհարաբերությունները երեխայի համար առաջին հերթին նշանակում է ծնողների՝ հոր և մոր վերաբերմունքն իր նկատմամբ, որը երեխայի համար մեկնաբանվում է ընդունված և ցանկալի լինելու կամ չընդունված և չսիրված լինելու ենթատեքստում: Սրա հիման վրա էլ կառուցվում է երեխայի վերաբերմունքն իր և շրջապատող արտաքին աշխարհի նկատմամբ: Այսինքն՝ ձևավորվում է երեխայի բազային վստահությունը կամ անվստահությունն աշխարհի նկատմամբ: Ընտանեկան սոցիալականացումը չի նշանակում պարզապես երկկողմանի փոխգործունեություն, այլ նշանակում է ծնողների և երեխաների դերային փոխլրացում: Երեխայի անձի համարժեք զարգացման համար էական նշանակություն ունեն ընտանեկան հարաբերությունների հուզական տոնը և վերահսկման, կարգ ու կանոնի գերակշռող տիպը: Երեխաների պահանջմունքներին չբավարարող հուզական տոնը ձևավորում է չգիտակցված ագրեսիվություն՝ ուղղված կամ դեպի

դուրս՝ նույնիսկ բոլորովին իր հետ կապ չունեցող մարդկանց, կամ դեպի ներս, որն առաջ է բերում ցածր ինքնահարգանք, մեղքի զգացողություն, տագնապ և այլն:

Վերահսկման կամ կարգ ու կանոնի որոշակի տիպը նպաստում է բնավորության որոշակի գծերի ձևավորմանը: Մի դեպքում՝ ձևավորվում է ակտիվ ինքնուրույն և նախաձեռնող բնավորությամբ, մյուս դեպքում՝ պասիվ, համակախյալ, կուրորեն ենթարկվող բնավորությամբ երեխա: Երեխայի համար ցանկացած տարիքում չափազանց անհրաժեշտ է իր համար նշանակալի մեծահասակների հետ շփումը, նրանց անմիջական մասնակցությունն իր կյանքում: Դրանց բացակայության դեպքում երեխաներն ունենում են ֆիզիկական, ճանաչողական, հուզական և վարքային զարգացման հապաղումներ:

Ծնողների մանկավարժական կրթության հիմնախնդիրը մանկավարժության ամենադժվար և ամենաքիչ մշակված հարցերից է: Սովորաբար յուրաքանչյուր երիտասարդ զույգ երեխայի դաստիարակության բարդ ու պատասխանատու գործին ձեռնամուխ է լինում սեփական նախաձեռնությամբ և կամքի ուժով: Սակավափորձ ծնողները երբեմն օգտվում են ընդունված ավանդույթների զինանոցից, առանձին դեպքերում էլ որևէ դժվարության հանդիպելիս դիմում են կողմնակի մարդկանց ոչ ճիշտ հիմնավորված խորհուրդներին: Ընտանեկան դաստիարակության անհաջողությունների պատճառները թաքնված են կրթադաստիարակչական աշխատանքին ծնողների անպատրաստ լինելու, երեխայի հոգեկան զարգացման գործընթացները հասկանալու նրանց անկարողության մեջ: Երբեմն էլ նրանք հստակ չեն գիտակցում հասարակության առջև իրենց պատասխանատվությունը: Երեխան ընտանիքում է սկսում և անցկացնում իր կյանքի մեծ մասը: Այստեղից էլ կարևորվում է այն խնդիրը, թե նա ինչպիսի դաստիարակություն է ստանում իր ընտանիքում: Արդյոք դա համապատասխանու՞մ է երեխայի դաստիարակության այն սկզբունքներին ու մեթոդներին, որոնք կիրառվում են ուսումնական հաստատություններում: Գոյություն ունի՞ համագործակցություն մանկավարժների և ծնողների միջև:

Հետազոտական աշխատանքում փորձել ենք բացահայտել դաստիարակության այն սխալ ոճերն ու սկզբունքները, որոնք բացասաբար են անդրադառնում աճող երեխայի վարքի վրա և առաջարկել ծնողների մանկավարժական կրթության

այնպիսի սկզբունքներ և պայմանները, որոնք անհրաժեշտ են ընտանիքում երեխաների արդյունավետ դաստիարակության իրականացման համար: Բոլորիս հայտնի է, այն անժխտելի փաստը, որ երեխայի դաստիարակության հիմքերը դրվում են, առաջին հերթին ընտանիքում: Ընտանիքը դաստիարակող կոլեկտիվ է և ոչ ոք չի կարող փոխարինել նրան: Սա այն օղակն է, որտեղ սկիզբ է դրվում անձի ձևավորմանը: Եթե ընտանիքում մթնոլորտն անբարենպաստ է, եթե մեծահասակները հասարակության հետ հաշվի չեն նստում, ապա հասարակությունից անկախ կյանքը չի կարող նպաստել համակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորության ձևավորմանը:

Պետք է նշել, որ անբարենպաստ ընտանիքը երեխայի համար հակասոցիալական կամ ասոցիալ ընտանիքի հոմանիշ չէ: Տարբեր են ընտանիքները, տարբեր են նաև երեխաները, այնպես, որ միայն ընտանիք-երեխա փոխհարաբերություններն ունեն իրավունք համարվելու բարենպաստ կամ անբարենպաստ:

Կարևորելով ընտանիքի դերը երեխաների ճիշտ, հասարակայնորոն համարժեք դաստիարակության, մարդու բարոյահոգեբանական նկարագրի ձևավորման խնդրում, ցավով ենք արձանագրում, երբ այդ նկարագիրը ենթարկվում է այլափոխումների և մենք ունենում ենք հուզական դժվարություններով և վարքի շեղումներով, ծնողական խնամքից դուրս մնացած երեխաներ:

Դժբախտաբար, մեր ազգին, հայ ընտանիքին անհարիր այդ երևույթները հետևանք են դժվար կյանքի, սոցիալական և իրավական անպաշտպանվածության, անկայուն քաղաքականության, քայքայված տնտեսության և այլն:

Անբարենպաստ ընտանիքի սոցիալ-հոգեբանական բնութագիրն առաջին հերթին հատկանշվում է նրանով, որ այն իր էապես ոչ ճիշտ կամ մանկավարժորեն, հասարակայնորեն անընդունելի դաստիարակչական ներգործությամբ նպաստում է անձի սխալ կայացմանը, նրա անձնային և հասարակական ուղղվածության ձևավորմանը, նրա մեջ բացասական դիրքորոշումների, ոչ համարժեք կամ հիվանդագին հակումների, հետաքրքրությունների և պահանջմունքների, ինչպես նաև, կյանքին ու շրջապատին հարմարվելու և կողմնորոշվելու սովորությունների ու հմտությունների կազմավորմանը: Այսինքն, այդպիսի ընտանիքն իր նկարագրով

ստեղծում է ակնառու նպաստավոր պայմաններ, այստեղ աճող, զարգացող երեխայի բարոյական և սոցիալական դեգրադացիայի համար: Այստեղ անձն աստիճանաբար ենթարկվում է դեֆորմացիայի (ձևափոխման): Բոլորովին պարտադիր չէ, որ նման ընտանիքում մեծացող երեխան անպայման ընտրի օրինազանց վարքի ուղին, բայց ակնհայտորեն նա կկրի ընտանիքի անբարենպաստության կնիքը, որը կարող է արտահայտվել հուզական խաթարումներով, հույզերի դրսևորման դժվարություններով և այլն: Նման երեխան կարող է լինել ոչ բարյացակամ, չկամ, զուրկ գթասրտությունից, անտարբեր լինել մարդկանց նկատմամբ, չունենալ հասարակական ակտիվություն, ունենալ արտահայտված չարություն, ագրեսիվություն և այլն, որոնք կարտահայտվեն մարդ-մարդ, մարդ-հասարակություն հարաբերություններում:

Ըստ ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտի բնույթի, հարաբերությունների դրսևորումների, ծնողների և ծնողների ու երեխաների միջև փոխհարաբերոքբությունների, դերային վարքագծի և այլնի, կարելի է առանձնացնել անբարենպաստ ընտանիքների մի շարք տիպեր: Անդրադառնանք առավել արտահայտված տիպերի բնութագրմանը:

- պայմանականորեն բարենպաստ կամ պոտենցիալ անբարենպաստ ընտանիքներ,
- պաշտոնական, << սառը >> փոխհարաբերություններով ընտանիք,
- կոնֆլիկտածին կամ քրեածին հարաբերություններով ընտանիք,
- քրեածին հոգեբանական մթնոլորտով և հարաբերություններով ընտանիք,
- սոցիալապես ոչ լիարժեք ընտանիք:

Նշելով անբարենպաստ ընտանիքների տիպերը ՝ նշենք նաև դրանց հիմքը կազմող հիմնական առանձնահատկությունները.

- հոգեբանական անհամատեղելիություն ծնողների միջև, որը պայմանավորում է ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը,
- մանկավարժական անհամատեղելիություն, որն արտացոլում է երեխայի դաստիարակություն հարցում առկա տարաձայնությունները,

- ծնողների ռեֆլեքսիայի, խոհածության, ինքնակառավարման, ինքնաքննադատության և ինքնագնահատման ընդունակությունների բացակայությունը,
- ծնողների գիտակցության դիսհարմոնիան՝ երկատվածությունը,
- ծնողների սոցիալական դերի, դերային վարքագծի և սոցիալական սպասումների միջև հոգեկան անհամատեղելիությունը,
- խորը հոգեբանական հակասությունները ծնողների վարքի ու գործունեության, երեխաներին ներկայացվող պահանջների միջև,
- երեխաների ճիշտ ճիշտ դաստիարակության հարցում ծնողների ցանկությունների և նրանց գիտելիքների ու հնարավորությունների միջև հակասությունները և այլն [5; էջ՝ 7-13]:

Կարևորելով ընտանիքի դերը, չենք կարող չխոսել դաստիարակության ոճի կարևորության և ճիշտ ընտրության մասին: Այդ իսկ պատճառով էլ, պետք է խուսափել դաստիարակության սխալ ոճերից: Դրանք են.

- Անկանոն դաստիարակություն, որի դեպքում երեխան հսկողության տակ չէ և նրան դաստիարակում է փողոցը՝ հիմնականում իր բացասական ներգործությամբ,
- Գերհովանավորչություն, երբ երեխաներին անընդհատ և ամենուր հետևում են. Երեխան սահմանափակվում է, դառնում ինքնամփոփ,ենթարկվող և, նույնիսկ, հասուն տարիքում չի կարողանում դուրս գալ այդ վիճակից: Այս ոճը երեխային կարող է դարձնել նաև կամակոր և եսասեր, կամ, ընդհակառակը, նրա մեջ ձևավորել սխալ, թերի գնահատական սեփական ուժերի նկատմամբ,
- Դաստիարակություն <<Մոխրոտի>> սկզբունքով, երբ երեխային համարելով <<մեծ>> հանձնարարում են ծանր, նրա ուժերից վեր աշխատանք և պարտավորություններ:

Բացի դաստիարակության սխալ ոճերից, տեսակներից, գոյություն ունեն նաև դաստիարակության թերություններ: Դրանցից են՝

- տարերային դաստիարակության գերիշխումը ընտանիքում, երբ դաստիարակության ընթացքում չեն կիրառվում սկզբունքներ, կամ կիրառվու մ են ժամանակ առ ժամանակ,

- դաստիարակության ընթացքում վերբալ մեթոդների կիրառման նախընտրանքը՝ դաստիարակություն քարոզների միջոցով,
- ծնողների հեղինակության արժեզրկումն ու հեղինակազրկումը,
- հուզական ջերմ մթնոլորտի բացակայությունը,
- կենցաղային կուլտուրայի պակասը,
- երեխային ներկայացվող պահանջների բացակայությունը կամ տարբեր լինելը / ծնողները մի այլ պահանջ են ներկայացնում երեխաներին մանկապարտեզն ու բակը՝այլ/,
- <<ազատ>> դաստիարակություն, որ հաճախ վեր է ածվում անկանոն դաստիարակության,
- մանկավարժական և հոգեբանական գիտելիքների պակասը,
- հաղորդակցման ոճի փոփոխական բնույթը, անկանոնությունը, որը պայմանավորված է սոցիալական ծանր պայմաններով, պատմական շրջանով և այլն:[47; 207 էջ]

Ուստի, ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով հարկավոր է կիրառել մանկավարժագիտության մեջ ընդունված ընտանեկան դաստիարակության սկզբունքային մոտեցումներ, որոնք կոչված են նպատակաուղղելու տվյալ գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները: Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից: Դրանք են՝

- մարդասիրություն և գթասրտություն,
- երեխայի հանդեպ սիրո և հարգանքի դրսևորում,
- ընտանեկան փոխհարաբերություններում լավատեսության գերակայություն,
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատում,
- երեխային՝ դաստիարակության միասնական պահանջների ներկայացում,
- ծնողների հեղինակության անսասանելիության և կարծիքի գերակայության,
- ընդունում, հետևողականություն և պահանջկոտություն,
- երեխային ընտանիքի գործունեության մեջ ակտիվ ներգրավում:

Ակնհայտ է, որ ծնողների հետ տարվող աշխատանքը ուսումնական հաստատության մանկավարժների գործունեության համակարգի անբաժանելի մասը պետք կազմի:

Այդ իսկ պատճառով, ծնողների հետ տարվող աշխատանքներում առանձնացնում ենք հետևյալ **անհրաժեշտ պայմանները.**

1. երեխայի ընտանիքի կենսաձևի և սոցիալական մշակույթի, միկրոկլիմայի ուսումնասիրում,
2. երեխայի դաստիարակության մեջ դպրոցի և ընտանիքի միասնական պահանջների սահմանում ու պահպանում,
3. երեխաների ազատ ժամանակի արդյունավետ օգտագործում և այդ աշխատանքների մեջ ծնողների ներգրավում,
4. ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների հաստատում,
5. երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում,
6. ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում,
7. պրակտիկ մանկավարժական օգնության ցուցաբերում,
8. ծնողների՝ մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում,
9. ծնողներին համապատասխան տեղեկատվության տրամադրում:

Մանկավարժի կողմից ծնողների հետ համատեղ աշխատանքը հնարավոր է իրականացնել հետևյալ ձևերով՝ տարաբնույթ միջոցառումներ և խաղեր, մանկավարժական զրույցներ ու թեմատիկ խորհրդատվություններ, գիտագործնական համաժողովներ, հատուկ ծրագրով կազմակերպվող թրեյնինգներ և խմբային հանդիպումներ: Ծնողական հանդիպումները կարող են կազմակերպվել ծնողական ժողովների, այցելությունների, բաց դռների օրերի, կլոր սեղանի, բանավեճի, խաղային սցենարների, ցերեկույթների, պրոբլեմային իրադրությունների քննարկման ձևով: Ծնողների հետ կազմակերպվող թեմատիկ հանդիպումներին կարող են հրավիրվել այլ մասնագետներ՝ հոգեբան, լոգոպեդ, բժիշկ, սոցիալական մանկավարժ և այլն: Ծնողական նման հանդիպումները էապես կնպաստեն նրանց մանկավարժական գիտելիքների ձեռքբերմանը և երեխաների կրթադաստիարակչական գործընթացին՝ ինչպես նախադպրոցական հաստատություններում, այնպես էլ՝ ընտանիքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմախնդրի շուրջ հոգեբանամանկավարժական գրականության վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Սովորողների հետ արդյունավետ աշխատանք ապահովելու հարցում չափազանց կարևորվում է ընտանիքի հետ համագործակցությունը:
2. Բացահայտվել են երեխաների ընտանեկան դաստիարակության և ընտանիք-դպրոց համագործակցության ձևերը՝ սեմինարներ, կլոր սեղաններ, ծնողական ժողովներ, տունայցեր, հարցաթերթերի կիրառում և այլ:
3. Վերլուծվել է ծնողական կրթության կարևորությունն ու անհրաժեշտությունը երեխաների դաստիարակության հարցում:
4. Ներկայացվել են մանկավարժական տարբեր մոտեցումներ, որտեղ կարևորվել է ծնողների մանկավարժական իրազեկության բարձրացումը և շարունակական համագործակցությունը դպրոցի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Է.Ա. «Մեր երեխան, նրա զարգացումն ու դաստիարակությունը», Երևան 1989 էջ 6, 42-43
2. Ասմարյան Ք., Պոնոմարենկո Ի., «Ընտանեկան դաստիարակության ժամանակակից մոտեցումներ» ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողով: ք. Իջևան, 16 մայիս, 2015թ./
3. Буянов М. Н. Ребенок из неблагополучной семьи. М.г 1988 -207 с
4. Меренков А.В. Родители и педагоги: Растим ребенка вместе, Екатеринбург, 2005
5. Педагогика: учеб. / Л.П. Крившенко [и др.]; под ред. Л.П. Крившенко. – М.: ТК Келби, Изд-во Проспект, 2005. – 432 с.